

Աղա Մաթոս

1709 թ. սեպտեմբերի 13-ի իրիկնամուտին¹ Լիվոռնոյի հայկական եկեղեցու բարերար եւ հիմնադիր Աղա դի Մաթոսը² դուրս եկաւ Սուրբ Կողմաս եկեղեցուց, որտեղ իր սովորոյթի համաձայն մասնակցում էր երեկոյեան պատարագին: Նրան, սակայն, վիճակուած էջր ապահով տուն վերադառնալ. դանակի տասնութ հարուածներէ ենթարկուելով՝ սպանուեց իր «վրացի»³ Բեջան անունով ծառայի կողմէ:

մից: Միայն յաջորդ օրը՝ վաղ առաւօտեան, անցորդները յայտնաբերեցին Աղայի մարմինը եւ այն տեղափոխեցին տուն: Ենթադրաբար, Բեջանը վրէժխնդիր էր եղել Աղայից, քանի որ վերջինս հեռացրել էր նրան Լիվոռնոյի հայկական նորակառոյց եկեղեցու շինարարութեան վերակացուի պաշտօնից:

Աղայի ողբերգական մահուանը յաջորդեցին նրա ընտանիքի՝ Լիվոռնո ուղեւորուելու, այնուհետեւ դատական քաջբռնկների միջով անցնելու երկարատեւ գործընթացները⁴:

դագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 452): Բեջանի անունը բազմիցս նշուած է Ֆլորենցիայի պետական արխիւում պահուող Լիվոռնոյի հայկական եկեղեցու թղթերում (տե՛ս «Documenti Armeni», Acquisti e Doni, Archivio di Stato di Firenze, Buste 123, N 74, 98)՝ Վենետիկում եւ Լիվոռնոյում ապրող յայտնի այլ հայ վաճառականների անունների կողքին:

4 Մ. Վ. Ուղուրլեան, Պատմութիւն հայոց գաղթականութեան... էջ 84-85. Ստեփաննոս Գիւլէր Ազոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատոր Գ, Վենետիկ-Ս. Ղազար, 1802, էջ 39: Բեջանի՝ եկեղեցու շինարարական աշխատանքների վերակացու լինելու փաստը նշուած է նաեւ Աղայի դէմ դատական գործի արձանագրութիւններում՝ Osservazioni Di Fatto Del Dottore Jacopo Ciocca Per Servire di Risposta all' Dissertazione In Liburnen. Fabricae Seu Redditionis Rationis dell' Illustrissimo Signor Avvocato Carlo Niccolo Villani Fatta Per l' Illustrissima Nazione Armena Contro gl' Illustrissimi Signori Eredi Age di Mathus Che Su Pubblicata il Di Primo Decembre 1749. In Lucca MDCCXLIX Nella Stamperia di Filippo Maria Benedini Con Licenza de' Superiori (տե՛ս Archivio Storico della S. Congregazione de Propaganda Fide, Fondo Scritture riferite nei Congressi, Armeni, vol. 11, ff. 900-968): Բեջանի անունը նշուած է որպէս աշխատող, ով ստացել է 1600 պէցցէ իր կատարած աշխատանքի դիմաց: Դատական գործընթացի արձանագրութիւնները տպագրուել են

1 Մ. Վ. Ուղուրլեան, Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցուց անցայ ի Լիվոռնոյ քաղաքի, Վենետիկ, 1891, էջ 102-103:
2 Մեզ հասած հայերէն եւ լատինատառ սկզբնաղբիւրներում Աղա Մաթոսի անունը գրուած է Աղա Մաթոս, Աղա Մատթոս, Աղա Մաթոս եւ այլ տարբերակներով: Լատինատառ սկզբնաղբիւրներում վերջինիս անունը հիմնականում նշուած է Մաթոս ձեւով: Այս հրատարակման մէջ մենք որդեգրել ենք Աղա Մաթոս տարբերակը՝ հիմք ընդունելով ինչպէս մեզ հասած ֆելդհանկային ինքնագիր մի քանի փաստաթղթերը, այնպէս էլ ստորեւ հրատարակուող Հաշուեմատեանի յիշատակումները: Խոջա Միմասի եւ իր եղբայրների կողմից Աղային ուղղուած մօտ չորս տասնեակ անետարական անամակներում, որոնք պահուած են Ֆլորենցիայի պետական դիւանում, Խոջա Միմասն Աղային դիմում է Աղա Մաթոս ձեւով: Աղայի ձեռագրով գրուած փաստաթղթերը տե՛ս օրինակ, Documenti Armeni, Acquisti e Doni, Archivio di Stato di Firenze, Busta 123, N 40, N 51 եւն:
3 Ենթադրելի է, որ Բեջանն ազգութեամբ ոչ թէ վրացի էր, այլ՝ վիրաբայ: Պատել Չոբանեանը, քննարկելով ԺԷ.-ԺԸ. դարերի աղբիւրներում «վրացի» բառի օգտագործումը, մէջբերում է տասնեակ աղբիւրներ, որ վիրաբայերն անուանում են վրացի (տե՛ս Պատել Չոբանեան, Վրացական ուղեգրութիւնները եւ նրանց տեղեկութիւնները հայերի մասին: XVIII դ. -XIX դ. 1-ին քառորդ), Երեւան, էջ 24-26): Միախառնուած է. Ղեւոնդ Ալիշանը Բեջանին ներկայացնում է որպէս Աղայի ծառայ Փարսաթանի որդի՝ Միրիշան անունով (տե՛ս Լ. Ղեւոնդ Ալիշան, Սիւսկան, Տե-

Աղա Մաթոսը, ով Լիվոռնոյի եւ Վենետիկի հայ համայնքներում ճանաչուած էր որպէս բարերար եւ թանկարժէք քարերի յաջողակ վաճառական, սերում էր Ղաբաբաղի հեռաւոր գիւղերից մէկից գաղթածների ընտանիքից: Տասնեօթներորդ դարի սկզբին Շահ Աբասի տեղահանումների արդիւնքում ներկայիս Լեռնային Ղաբաբաղի տարածքում գտնուող Հաթերք գիւղից Իրան տեղափոխուած եղբայրներ Օղլան Քեշիշը եւ Ղալաբեկը⁵ հազիւ թէ պատկերացնէին, որ իրենց ժառանգներից Աղա դի Մաթոսը օրերից մի օր հնարաւորութիւն կունենայ յարաբերուելու Արեւ-

արքայ Լուի ԺԴ-ի, Հոռմի Պապի եւ ժամանակի այլ ակնառու անձանց հետ⁶:

Աղա Մաթոսը որպէս գործակալ

Աղա Մաթոսը Նոր Զուղայի հայ վաճառականական ցանցի վառ ներկայացուցիչներից էր: Նոր Զուղայի առեւտրական կապիտալի եւ ԺԷ.-ԺԸ. դարերում վերջիններիս՝ հարաւարելեան Ասիայից եւ յատկապէս Հնդկական ենթամայրցամաքից մինչեւ միջերկրածովեան աւազան ընկած մենաշնորհային առեւտրական դերի մասին գիտական գրականութիւնը վերելք ապրեց վերջին մի քանի տասնամեակներում: Վերելքը հիմնականում պայմանաւորուած էր Մատենադարանի աշխատակիցներ Լեւոն եւ Շուշանիկ Խաչիկեանների, ինչպէս նաեւ Յակոբ Փափազեանի եւ նրանց գիտական թիմերի աշխատասիրութեամբ 1980-ականների կէսերին եւ 1990-ականներին լոյս տեսած Յովհաննէս Տէր-Դաւթեանի, Շահվելու որդի Սարգսատի, ինչպէս նաեւ Հազարեան առեւտրական ընկերութեան հաշուեմատեանների տպագրութեամբ: Սոյն ակնարկի նպատակն է առաջին անգամ լոյս աշխարհ բերել վերոնշեալ հաշուեմատեանների օրինակով մի փոքրիկ հաշուեմատեան կամ տոմար, որը պատկանում է ԺԷ. դարի երկրորդ կէսին եւ ԺԸ. դարի առաջին կէսին Սեֆեան Իրանում գործող Մինասեան առեւտրական ընտանիքի գլուխ Խոջա Մինասի եւ

գրքովով, եւ այս յղումն օրինակն այժմ պահուած է Հոռմի Հաւատաստիտ Ժողովի դիւանում: Այն տպագրուել է անմիջապէս Աղայի ժառանգների եւ Լիվոռնոյի հայ համայնքի միջեւ դատական գործի ասարտից յետոյ՝ 1749 թ.:
5 Աղա Մաթոսի տապանաքարի արձանագրութեան մեջ պարզ նշուած է, որ վերջինս «Հայոց Արեւելից կողմանցից» էր՝ Արցախ-Ղարաբաղի մէջ իրական ընտանիքից, Օղլանքեշիշեան ազգանունով: Հաթերք գիւղի գերեզմանոցում է գտնուող Ղալաբեկի տապանաքարը, թուագրուած 1611 թ.: Հնարար է, որ Ղալաբեկն Իրանից վերադարձել էր Հաթերք, իսկ վերջինիս եղբայրն ու ընտանիքը մնացել էին Իրանում (տե՛ս Ս. Գ. Բարխուդարյան, Դիւան հայ վիմագրութեան, Արցախ, հտ. 5, Երեւան, 1982, էջ 131: Աղայի ծագման մասին տե՛ս նաեւ Mesrop Owl'owrlean, Storia Della Colonia Armena di Livorno e Della Construzione Della Sua Chiesa. Presentazione, Traduzione e Note Alessandro Orongo (Livorno: 1990), 72-78, 80, 85, 90; Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, Վարդապատ, 1884, էջ 17: Աղայի ինչպէս լատիններէն այնպէս էլ հայերէն տապանագրի հրատարակութիւնը տե՛ս Ս. Գ. Ազոնց, նշ. աշխ., էջ 40-41: Այստեղից էլ մեջբերում ենք տապանագրի հայերէն տեքստը.
«Այս է դամբարան Թարվեզոյ Պարոն Աղային Ի գարմէ իշխանաց Աղուանից Օղլանքեշիշեանց Գեղեցկաշէն տաճարի կառուցողի Որ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս ի թուականիս հայոց ՌԾՄԸ. ի սեպտեմբերի Գ. Յամի հասակի իւրոյ ՀԴ»:

6 Լիվոռնոյի հայկական եկեղեցու եւ հայ համայնքի մասին տե՛ս օրինակ, Gli Armeni a Livorno l'Intercultura di Una Diaspora, Interventi nel Convegno «Memoria e Cultura Armena Fra Livorno e l'Oriente», ed. G. Giacomo Panessa e Massimo Sanacore (Archivio di Stato di Livorno, 2006; Lucia Frattarelli Fischer, Les Arméniens à Livourne, in Roma-Armenia, ed. Claude Mutafian (Rome: De Luca, 1999), էջ 298-302: Հմմտ. նաեւ նոյնի Per La Storia dell'Insediamento Degli Armeni a Livorno Nel Seicento, in Gli Armeni Lungo le Strade d'Italia, Atti del Convegno Internazionale (Torino, Genova, Livorno, 8-11 March, 1997), էջ 23-41:

վերջինիս գործակալ՝ Ադա Մաթոսի գործունեությունը:

Ադայի վերաբերեալ հասանելի արխիվային փաստաթղթերը մատնանշում են, որ վերջինս գլխավորապես ներգրավված էր ադամանդի եւ թանկարժէք քարերի, այդ թւում՝ ադամանդի, ռուբինի, զմրուխտի, մարգարտի, ագաթի եւ բազմաթիւ այլ քարերի առեւտրում: Վաղ արդի շրջանում հայերի ներգրավումը ադամանդի եւ թանկարժէք քարերի համաշխարհային առեւտրի մեջ, նշանակում էր, որ վերջիններս, թէկուզ եւ մասնակիորէն մասնակցում էին նաեւ արեւելասիական քարերի եւ փոխարէնը՝ միջերկրածովեան մարջանի՝ դէպի Հնդկաստան տեղափոխման մեջ⁷: Ադայի ապրանքների ցուցակը ներառում էր տարբեր մաքրութեան, ձեւի եւ գոյների ադամանդներ, որոնցից ամենամեծը 233-կարատանոց անգոյն, բծով ադամանդ էր⁸:

7 Սեպուր Ապրանեանի անդրադարձը Խոջա Միսաեանների առեւտրական ընկերութեանը տե՛ս Sebouh Aslanian, *From the Indian Ocean to the Mediterranean: Circulation and the Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa/Isfahan, 1606-1747* (Berkeley: University of California Press, 2011), էջ 159-164:

8 Տե՛ս օրինակ, Gedalia Yegorov, *Diamonds and Coral: Anglo-Dutch Jews and Eighteenth-Century Trade* (Leicester: Leicester University Press, 1978); Francesca Trivellato, *Familiarity of Strangers: The Sephardic Diaspora, Livorno, and Cross-Cultural Trade in the Early Modern Period* (New haven, CT: Yale University Press), էջ 224-250:

9 Ադամանդի՝ վաղ արդի շրջանում կարատով, ինչպէս նաեւ ութիով չափելու մանրամասների մասին վկայում է Միսաեան առեւտրական ընտանիքի անդամ Ադամալ Խոջա Միսաեանն իր անտիպ աշխատութիւնում (տե՛ս Խոջա Ադամալ Միսաեան, Ռոդի Սաֆրազի, *Յադագու վաճառականութիւն ուսանելոյ խրատ յոյժ պիտանի եւ օգտակար*՝ Երեւանի մատենադարան, ձեռ. 5994 (այս բնագիրը եւս պատրաստել ենք ֆրանսերէնէն): Հմմտ. նաեւ Jean-Baptiste Tavernier, *Travels in India*, Vol. 2, (London: Macmillan and Co., New York, 1889.), xi-xii.

Ադա Մաթոսն իր վաճառականական կենսագրութիւնը սկսել էր որպէս կոմենդա-գործակալ¹⁰ աշխատելով Միսաեան առեւտրական ընտանիքի համար: Սակայն երբ 1679 թ. կոմենդա պայմանագիր է կնքուում Խոջա Միսաի եւ Ադա Մաթոսի միջեւ, վերջինս ամենայն հաւանականութեամբ դառնում է Միսաեան ընտանիքի մշտական ներկայացուցիչը Տոսկանայում: Հաշուեմատեանում տեղ գտած գործառնութիւնները ներառում են 1679-ից մինչեւ 1693 թ. ընկած ժամանակահատուածը, երբ Ադա Մաթոսն արդէն չէր ճանապարհորդում, այլ ընդունում-ստանում էր Միսաեան ընտանիքի այլ գործակալների բերած ապրանքները Տոսկանայում եւ Վենետիկում:

Միսաեան առեւտրական ընտանիք

Առեւտրական ընտանիքի մոզելն ընկած էր Նոր Զուղայի հայ առեւտրական ցանցի սրտում՝ իրենից ներկայացնելով հիմնական դրամական կապիտալի պահպանման եւ շրջանառութեան աղբիւր: Առեւտրական ընտանիքի շուրջ էր նաեւ

10 Կոմենդայ պայմանագիրն ու կոմենդայ գործակալների ինստիտուտը սերտորէն կապուած էին հայ առեւտրական ընտանիքների հետ եւ խիստ կարեւոր էին դրանց արդիւնատէր գործունէութեան համար: Կոմենդան ուներ իսլամական եւ միջերկրածովեան արմատներ, որոնք սկիզբ են առնում դեռեւս վաղ միջնադարից: Կոմենդան պայմանագիր էր, մեր պարագայում, երկու անձանց միջեւ, որոնցից մէկը՝ խոջան, հիմնական կապիտալի տէրն էր, իսկ միւսը՝ գործակալը, ով վարձում էր խոջայի կապիտալը շրջանառելու եւ շահոյթ ստանալու համար: Այս պարագայում կոմենդայ պայմանագիրը Խոջա Միսաի եւ Ադա Մաթոսի միջեւ էր, եւ Ադա Մաթոսը գործակալն էր: Միջնադարեան կոմենդայի, որս ծագման, զարգացման եւ շուրջայական առեւտրական ցանցում ընդգծուած կապի մասին մանրամասն տե՛ս Սեպուր Ապրանեան, *Աշխատ. էջ 121-149*:

կազմակերպուում Նոր Զուղայի առեւտրական գործառնութիւնների զգալի մասը¹¹:

Միսաեան առեւտրական ընտանիքը Նոր Զուղայի ամենաազդեցիկ երեք ընտանիքներից մէկն էր, ովքեր ներգրավուած էին ադամանդի եւ թանկարժէք քարերի առեւտրի մէջ Շեհրիմանեանների եւ Գերաք-Միրմանների¹² հետ մէկտեղ:

Ի տարբերութիւն միւս երկու ընտանիքներից, Միսաեաններն իրենց ակտիւ առեւտրական գործունէութեան մեծ մասն անցկացրել են Սեֆեանում Իրանում եւ Հնդկաստանում: Ընտանիքի նահապետը Փանոսի որդի Խոջա Միսաան էր, ում վաղ կեանքի մասին ոչինչ յայտնի չէ: Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի դի-

11 Այս մասին ավելի մանրամասն տես Սեպուր Ապրանեանի յօդուածը Զուղայի առեւտրական ընտանիքների եւ համաշխարհային առաջին հաւաքական դրամապիսային՝ արեւելահնդկական ընկերութիւնների համեմատութեան մասին, Sebouh Aslanian, *Julfa Merchants and European East India Companies: Overland Trade, Protection Costs, and the Limits of Collective Self-Representation, Mapping Safavid Iran*, ed. Nobuaki Kondo, *Studia Culturae Islamicae* No. 105, Fuchu, Tokyo, 2015, էջ 189-222: Առեւտրական ընտանիքի՝ որպէս Նոր Զուղայի առեւտրա-տնտեսական կեանքի կազմակերպման մասին տե՛ս նաեւ Edmund Herzig, *The Family Firm in the Commercial Organization of the Julfa Armenians*, - *Études Safavides*, ed. I. Calmard. Paris and Tehran: Institut Français de Recherche en Iran, 1993), 287-304; Շուրջանիկ Խաչիկյան, *Նոր Զուղայի հայ վաճառականութիւնը եւ նրա առեւտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ 17-18-րդ դդ.*, Երեւան, 1988:

12 Օեֆրիմանեանների մասին տե՛ս Sebouh Aslanian, *From the Indian Ocean...*, էջ 149-158: Օեֆրիմանեանների՝ թանկարժէք քարերի առեւտրի մէջ ներգրավուածութեան մասին տե՛ս Evelyn Korsch, *The Scerimans and Cross-Cultural Trade in Gems: The Armenian Diaspora in Venice and Its Trading Networks in the First Half of the Eighteenth Century*, - *Commercial Networks and European Cities, 1400-1800*, ed. Andrea Caracausi and Christof Jeggle (Routledge, 2014), էջ 223-239, 293-298. Միսաան եւ Օեֆրիմանեան գերդաստանների մասին տե՛ս նաեւ Մ. Ուղտըլեան, *Աշխատ.*, էջ 199-211:

ւանից մեզ է հասել Խոջա Միսաի կտակը, գրուած 1700 թ.¹³: Խոջա Միսաան ունէր հինգ որդի՝ Քանան, Սեթ Ադա, Սաֆրազ, Էլիազ եւ Էմնիազ անուններով: Առաջին երկուսը փոխարինել են Խոջա Միսաի նորակա ընկերութեան տնօրէններ վերջինիս մահից յետոյ:

Երբ 1747 թ. Միսաի միակ կենդանի որդի Էմնիազը հրկիզուեց Նազիր Շահի հրամանով, նրան փոխարինելու եկաւ Միսաի եղբորորդի Խոջա Ադամալ Միսաեանը¹⁴ (Որդի Սաֆրազի), ում գրչին է պատկանում, «Յաղագս վաճառականութիւն ուսանելոյ խրատ յոյժ պիտանի եւ օգտակար» Մատենադարանում պահուող անտիպ աշխատանքը մարգարտի եւ այլ թանկարժէք քարերի մասին: Այս ձեռնարկը եւ մեծամասամբ երբեւէ չուսումնասիրուած այլ արխիվային փաստաթղթերը վկայում են այն մասին, որ այս ընտանիքը ներգրավուած էր ադամանդի, թանկարժէք քարերի, մուշկի, հարաւարեւելասիական տարբեր գործուածքների համաշխարհային մասնագիտացուած առեւտրի մէջ:

Հաշուեմատեանը

Մեզ հասած առաջնային եւ ամենակարեւոր արխիվային աղբիւրը, որը լոյս է սփռում Ադա Մաթոսի եւ Միսաեան առեւտրական ընկերութեան մասնագիտական գործունէութեան վրայ, Վենետիկի Կոներ թանգարանում (*Museo Civico e Raccolta Correr di Venezia*, P.D. 66.c Համարի տակ) պահուող Հաշուեմատեանն է: Այն շագանակագոյն կաշեկազմ տետրակ է՝ 54 սմ երկարութեամբ եւ 23 սմ լայնու-

13 Խոջա Փանոսի որդի Միսաի կտակը տե՛ս Դիւան Ա. Ամենափրկիչ վանքի, Զանազան ճիւղերով գրութիւններ, Պահարան 1, Կտակներ, Նոր Զուղա, 28/ԺԳ, ձեռագիր N 19:

14 Տե՛ս Sebouh Aslanian, *From the Indian Ocean...*, էջ 161:

Թեամբ¹⁵: Բաղկացած է 12 ծալուած թերթերից, որոնցից վերջինի վրայ կայ ժամանակի ակնառու հայ վաճառականների եւ հոգեւորականների ութ կնքադրոշմ: Կնիքներից երկուսը կրկնուում է բոլոր համարակալուած թերթերի վերեւում: Կրկնուող կնքադրոշմներից մէկը արաբատաւ է եւ պատկանում է Մահտեսի Մատուր դի Ղեւոնդին (կնքադրոշմը غواند طفل اسودود): Հաշուեմատեանին կից որպէս յաւելում գրուած է յետագայի (ԺԹ դարի) երկու գրութիւններ, որոնցից մէկը հաշուեմատեանի իտալերէնով կարճ նկարագրութիւնն է՝ ստորագրուած Մատուր դի Գեղէնի եւ Սարհատ դի Մուրադ Շեհրիմանի կողմից: Միւսը նոյնպէս ձեռագրի իտալերէն բացատրութիւնն է՝ ստորագրուած Սուրբ Ղազարի Մխիթարեան միաբան Յ. Իսաւերդեանցի կողմից 1862 թ. յուլիսի 21-ին¹⁶: Պէտք է նշել, որ սոյն հաշուեմատեանը

նր մեզ հասել է մէկ օրինակով եւ բնագրի վկաների կնքադրոշմներով ու ստորագրութիւններով վաւերացուած կրկնօրինակն է, հաւանաբար՝ պատրաստուած Աղա Մաթոսի մահից յետոյ բացուած դատական գործին ներկայացնելու նպատակով:

Բնագիրը, որն ըստ հաստատող վկաների՝ գրուած է եղել Խոջա Մինասի ձեռագրով, հաւանաբար չի պահպանուել, կամ տեղակայութիւնը մեզ յայտնի չէ: Բնագրի կրկնօրինակը ստորագրութիւններով ու կնքադրոշմներով վաւերացուել է ութ վկաների եւ ժամանակի էջմիածնի կա-

Բ

Al Signore Cav.re Lazari,

Credo sarebbe inutile scrivere a lungo sopra il presente manoscritto, di cui il contenuto e' gia' spiegato brevemente sulla prima carta, in lingua italiana, e di uni ne ricavo qua una copia:

Agga' figlio di Mattus, o sia Matteo ha ricevuto Effetti dal Signore Minas suo Capitalista per portare a vendere altrove per conto del Capitale in Tauris primo Settembre 1679.

Copia autenticata del Libro Originale tenuto dal Signore Minas Capitalista di Agga' figlio di Matteo di Tauris.= E li due sigilli sono delli due Testimonii sottoscritte, che affermano che tutto e' stato copiato dal Libro tenuto dal Signore Minas Capitalista di dello Agga di Matteo di Tauris sua Patria il quale mari in Livorno, gia' molti anni sono. Zattur di Gedeon riconosce, e Sigillo' la Carta.

Sarat di Murat Sceriman riconosce, e Sigillo'

In tutte le pagina non si hatta che degli effetti ricevuti, dei quali sarebbe inutile farne sigilli di Testimonii che attestano delli autenticita' della Copia, e dei quali il principale e quello del patriarca i Catolico Genle Armeno, di cui eccone la traduzione:

Jo Don Alessandro Catollico di tutti gli Armeni vidi questo proprio Libro che era il proprio manoscritto di Cogia' Minas; che io? conosco valido; questa copia era giasta, ho sigillato alla fine del Libro.

Sequono poi gli altri nove sigilli nello stesso senso, e quasi tutti con simili parole.

Gli effetti che trottari nel Libro sono gioiie di ogni sorte.

S. Lazzaro li 21 Luglio.1862.

P. G. D.r Issaverdenz

15 Յատուկ եւ խորին շնորհակալութիւն եմ յայտնում իմ դոկտորական թեզի ղեկավար, UCLA-ում Ռիչարդ Յովհաննիսեանի անուան ամբիոնի վարիչ Սեպուհ Ապամեանին ուշադրութիւնս այս հաշուեմատեանի վրայ սեւեռելու, ինչպէս նաեւ իր սեփական թուային տարբերակն ինձ տրամադրելու համար: Առանց վերջինիս մասնագիտական աջակցութեան, այս աղբիւրի տպագրութիւնն անհնար կը լինէր:

16 Ստորեւ բերում ենք այդ երկու բնագրերը.

Ա

Agga' figlio di Mattus, o sia mattos ha ricevuto Effetti dal Signore Minas suo Capitalista' per portare a vendere altrove per conto del Capitale in Tauris primo Settembre 1679.

Copia autenticata del Libro Originale tenuto dal Signore Minas Capitalista di Agga' figlio di Matteo di Taurish.

E li due Sigilli sono dalli due Testimonii sottoscritti, che affermano che tutto e' stato copiato dal Libro tenuto dal Signore Minas Capitalista di detto Agga' di Matteo di Tauris sua Patria, il quales mori in Livorno, gia' molti Anni Sono.

Zattur di Gedeon riconoscerà Sigillo' la carta Sarat di Murat Sceriman riconosce e Sigillo.

Թողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցու կողմից (1706-1714), ում կլոր եւ քառանկիւն կնքադրոշմները գտնուում են վերջին՝ ԺԹերթի վրայ:

Հաշուեմատեանը պատկանում էր Մինասեան առեւտրական ընկերութեան ղեկավար Խոջա Մինասին եւ միեւնոյն ժամանակ վերջինիս, որպէս կապիտալի տիրոջ, եւ նրա գործակալ Աղա Մաթոսի միջեւ կոմենդա-պայմանագիր էր: Այս տոմարը կամ հաշուեմատեանը, որը սկսել է լրացուել 1679 թ., պարունակում է հաշուապահական գրառումներ, ապրանքների ցանկ, այդ թւում՝ տարբեր գործուածքների, համեմունքների, բայց առաւելապէս անգոյն եւ ղեղին ազամանդների, փիրուզի, մարգարտի, լազուրիտի, ուռբինի, զմրուխտի եւ այլ թանկարժէք քարերի, որ Աղա դի Մաթոսը եւ միւս տասնեակ գործակալները պէտք է տանէին Սեֆեան Իրանից եւ Հարաւարեւելեան Ասիայից Իզմիրով Ստամբուլ, այնուհետեւ վաճառէին «Ֆուսկատանում» (Եւրոպայում), հիմնականում՝ Վենետիկում եւ Լիվոռնոյում: Ինչպէս նշուեց, հաշուեմատեանում ներառուած գործառնութիւնները վերաբերում են 1679-1693 թթ. ընկած ժամանակահատուածին: Առեւտրական մօտ քառասուն գործառնութիւնները կարելի է դասակարգել ըստ տարիների: Տասներեք տարուայ ընթացքում Աղա Մաթոսին, որպէս Մինասեան առեւտրական ընկերութեան գործակալի կամ մշտական ներկայացուցչի, ապրանքներ են հասցնում Մինասեան ընտանիքի մօտ քսան գործակալներ, որոնք հիմնականում ճանապարհորդում էին Իրանից՝ Թաւրիզից եւ Նոր Ջուղայից, ղէպի Կ.Պոլիս եւ Իզմիր, մասնակիօրէն առեւտուր անում տեղում, այնուհետեւ ուղեւորում Իտալիա՝ Լիվոռնոյ կամ Վենետիկ: Գործակալների շար-

քում էին նաեւ Աղա Մաթոսի եղբայր Մելքումը, նրա որդի Գալուցը եւ ուրիշներ¹⁷:

Ապրանքների առաջին մասնաբաժինը Աղային Լիվոռնոյ կամ Վենետիկ է ուղարկուում 1681 թ. սեպտեմբեր 8-ին Խոջա Մինասի կողմից: Քանի որ վերջինիս եւ Աղայի միջեւ պայմանագիրը կնքուել էր եւ ուժի մէջ մտել դեռեւս 1679-ին, մենք ենթադրում ենք, որ մինչեւ 1681 թ. նա, հաւանաբար, Տոսկանայում տեղաւորուելով եւ իր յաճախորդների ցանցն ընդլայնելով էր զբաղուած:

Ապրանքների առաջին խմբաքանակը Աղային է հասցուում Մինասեան ընտանիքի գործակալ Մելքումի միջոցով: Նոյն թուի ապրիլի 1-ին Դաշտցի Գասպարի կողմից, 1682 թ. հոկտեմբեր 28-ին Ջաքարէի, իսկ ղեկտեմբերին «Ճգնաւոր Հէրապետի» կողմից տարուում են ուրիշ ապրանքների խմբաքանակներ:

1683 թ. յունուարին Սիմոնի որդի Յուսէփի միջոցով լաջվարդի խմբաքանակներ են ուղարկուում:

1683 թ. մարտի 15-ին «Քօւ խաչիկն» ու Վանջալին 106 միւսուր սպիտակ ազամանք են տանում Կ.Պոլիս (բոլորը միասին 210 կարատ քաշով), իսկ այնտեղ վաճառել չկարողանալու դէպքում, Եւրոպա Աղային ուղարկելու:

17 Հաշուեմատեանում հանդիպում ենք հետեւեալ գործակալների անունները՝ Տէր Գալուց, Աղայմալ, Պետրոս, Մէլքում (Աղայի եղբայրը), Դաշտցի Գասպար, Ջաքարէ, Ծգնաւոր Հէրապետ, Սիմոնի որդի Յուսէփ, Քօւ խաչիկ, Վանջալի, Վարդապետ, Յարեանցի տղայ Գալուց (Մէլքումի որդի), Աղաջան, Յակոբ, Միքայէլ Վարդապետ, Խիմ Երեանցի Գրիգորի որդի Յակոբ, Մարգար, Մէլքումի որդի Պօղոս, Մատուր, Էդգար, Միրզա, Յակոբջան, Գասպար, Օհան, Դաշտցի Յուսէփ, Ջլա, Սիմոն, Յարեանցի Ջլոթ, Նազար, Տէր Մարգարէ որդի Սիմոն, Դատիօ որդի Աղամալ, Ամիրվալի: Նրանք ամենայն հաւանականութեամբ աշխատում էին Մինասեան առեւտրական ընկերութեան համար:

1683 թ. յունիսին «Վարդապետը» ապրանք է տանում Վանջէլիին Կ.Պոլիս, որ վերջինս հասցնի Աղա դի Մաթոսին Եւրոպա:

1683 թ. օգոստոսին «Մէլքումի տղայ Յարեւանցի տղայ Գալուցը» Մինասի եւ վերջինիս եղբայր Պետրոսի դրամագլխից ապրանքների խմբաքանակներ է տանում Աղային Իտալիա:

1683 թ. դեկտեմբերի 25-ին մէկ այլ խմբաքանակ է ուղարկում Կ.Պոլիս, իսկ այնուհետեւ Վենետիկ Աղաջանի կողմից:

1684 թ. (այստեղ ձեռագրի արտագրողը հաւանաբար սխալուել է եւ ԿԸ-ի փոխարեն ՀԸ գրել), 1685 թ., 1687-1692 թթ. Աղային թանկարժէք քարերի, ազամանդների եւ այլ ապրանքների խմբաքանակներ են հասցնում Յակոբը, Մէլքումի որդի Պողոսը, Ծատուրը մինչեւ Իզմիր եւ այնտեղից ուղարկում է Աղային Վենետիկ, Դաշտեցի Յուսեփը, Մինասեանների գործակալ Սիմոնը, Սէթը, Մենասարի որդի Էլմարը, Զլաւը, Նազարը՝ մինչեւ Վենետիկ, Շահաւորի որդի Հէրապէտը Գուշարաթից բերուած ապրանքը, Աղամալը, Քանանը Ստամբուլի վրայով Եւրոպա, տուսցի Մարկոսը եւ Բաղումի որդի Աւետը:

Ինչպէս տեսանելի է վերը նշուած գործառնութիւններից, Աղա դի Մաթոսը, լինելով Խոջա Մինասի գործակալը, ի տարբերութիւն ուրիշ գործակալների, չէր ճամփորդում, այլ միայն ստանում էր ապրանքների խմբաքանակները Եւրոպայում: Սա են վկայում նաեւ Յլորենցիայի պետական դիւանում պահուող Լիվոնոյի հայկական եկեղեցու արխիւային փաստաթղթերը, որոնց մէջ կան 43 առեւտրական նամակներ, Խոջա Մինասի կողմից գրուած իր գործակալ կամ ներկայացուցիչ Աղա դի Մաթոսին¹⁸:

Այս ամէնը կարգաւորում էր Խոջա Մինասի՝ Մինասեան առեւտրական ընկերութեան ղեկավարի կողմից: Հէնց նա էլ կազմել եւ պահպանել է հաշուեմատեանը:

Հաշուեմատեանում գրանցուած ապրանքների մէջ մեծ տեղ են զբաղեցնում ազամանդները (10,573 միւսեր), մարգարիտները, ինչպէս նաեւ՝ փերուզը (43,500 միւսեր): Ահա հաշուեմատեանում տեղ գտած թանկարժէք եւ կիսաթանկարժէք քարերի ամբողջական ցանկը՝ ազամանդ, ուռբին, զմրուխտ, մարգարիտ, փերուզ¹⁹, շափիւղայ, տպագիրոն, լաջուարդ, բիւրեղ, ազաթ, յակինթ, յասպիս, սարդիոն, եղեգնաքար, սուտակ, ծովակն, տուրմալին, կատուակն, սեւ սաթ, սաղափ: Ազամանդները տարբեր կարգի եւ գոյնների են, հիմնականում՝ սպիտակ, նաեւ դեղին: Որոշ դէպքերում նշում է, որ դրանք անտաշ են եւ չմշակուած: Հաշուեմատեանի ապրանքների թւում են բրդեայ ու մետաքսեայ, ինչպէս նաեւ՝ փորագրուած եւ դեկորատիւ տարբեր գործուածքներից պատրաստուած ծածկոցներ²⁰, հիմնականում Հարաւարեւ-

տուի փաստաթղթերը, որոնց մեծ մասը վերաբերում է եկեղեցու թիմնադիր՝ Աղա Մաթոսին (տե՛ս "Documenti Armeni," Acquisti e Doni, Archivio di Stato di Firenze, Busta 123):

19 Հաշուեմատեանում նշուած փիրուզների մի մասը Նիշապուրից էր, որը գտնուում էր Խորասան նահանգում՝ Բիսպուրդի լեռների ստորոտում: Նիշապուրն ու Բարեան տեղավայրերը փիրուզի ամենալայտնի աղբիւրն էին եւ գտնուում էին Սեֆեան կայսերական ազդեցութեան տակ: Փամակահի տարբերակում էին փիրուզի երկու տեսակ՝ արից եւ ընդերքից ստացուող: Տե՛ս Arash Khazeni, *Sky Blue Stone: The Turquoise Trade in World History* (Berkeley: University of California Press, 2014), էջ 21-22, 38-39:

20 Հնդկական գործուածքների համաշխարհային առեւտրում Նոր Զուղայի հայ վաճառականների մասնակցութեան մասին տե՛ս Olivier Raveaux, *The Orient and the dawn of Western industrialization: Armenian Calico Printers from Constantinople in Marseilles (1669-1686)*, - Goods from the East, 1600-1800: Trading Eurasia, ed. Maxine Berg with Felicia Gottman, Hanna Hodacs and Chris

18 Յլորենցիայի պետական դիւանում պահպանուած եւ Լիվոնոյի հայկական եկեղեցու երկու

լեան Ասիայից, նաեւ՝ մուշկ, մետաքս, կոճապղպեղ, խաւարծիլ, շիկածառ, Գուշարաթի բամբակ, հոտաւէտ բոյսեր ու արմտիք եւ այլն:

Ապրանքատեսակների նկարագրութեան եւ հաշուարկման համար օգտագործուած էին հիմնականում պարսկական, ինչպէս նաեւ հարաւարեւելասիական եւ եւրոպական քաշի միւսերները, այդ թւում՝ դանայ (հատ), դիրէթ (կարատ), մսխալ²¹, դիտր²², սէր²³, ցորէն (մէկ կարատը պարունակում էր 4 ցորէն), օնցայ, թան (գործուածքների համար), լիտրայ: Հաշուեմատեանում յաճախակի հանդիպում է դկն կրճատ փոխարժէքի միւսերը, որն ըստ մեզ նոյն դեկանն է, ինչը յայտնի արծաթէ, ինչպէս նաեւ որոշ դէպքերում ոսկեզրամ դահեկանն էր: Այն գալիս է պարսկերէն դահանի բառից (دانه) եւ համարժէք էր մօտ 1/7 ունցիայի կամ 4,53 գրամի²⁴:

Հաշուեմատեանում շատ են վաղ արդի շրջանում Նոր Զուղայի վաճառականներին յատուկ եւ վերջիններիս կողմից յա-

ճախ օգտագործուող թիւ ու թուանշան մատնանշող նշանագրութիւնները: Սրանք հասկանալու եւ վերծանելու համար մենք օգտուել ենք նախորդ հետազոտողների կատարած ահռելի աշխատանքներից, յատկապէս Գեղամ Գեւորեանի, Ասիայում եւ Միջերկրական ծովում առեւտրով զբաղուող հայ վաճառականների թուաբանութեան, թուագրութեան, չափերի ու միւսերների մանրամասնութիւնների մասին աշխատութիւնից²⁵:

Աւելորդ չենք համարում բերել թուերի նշանակման ժամանակ գործածուած գրանշանները՝ | - 1/4, || - 2/4, ||| - 3/4, = - 2/16, || = - 2/4+2/16²⁶: > - այս նշանը հիմնականում կիրառուում է արծէքային երկու, հիմնականում մեծ, այնուհետեւ փոքր միւսերների բաժանման դէպքում²⁷:

Հաշուեմատեանի նկարագրման մէջ թերեւս ամենակարեւոր կէտը վերաբերում է վերջինիս լեզուին եւ հնագրութեանը: Այն շարադրուած է Նոր Զուղայի վաճառականական բարբառով: Ի տարբերութիւն մեզ հասած այլ հաշուեմատեանների, սոյն հաշուեմատեանում տեղ են գտել խիստ մասնագիտական, թանկարժէք քարերի առեւտրին յատուկ եզրոյթներ՝ քարերի գոյնը, չափը, ձեւը, տեսակը, փայլը եւ այլ մանրամասներ նկարագրելու համար: Առկայ են լեզուական, ուղղագրական մի շարք անհամապատասխանութիւններ. օրինակ՝ նոյն բառը կամ անունը գրուում է տարբեր ուղղագրութեամբ: Բառերի մեծ մասը փոխառութիւններ է պարսկերէնից, արաբերէ-

Nierstrasz (London: Palgrave- Mcmillan, 2015), էջ 77-91; *Les Arméniens et la Méditerranée, Médiateurs Techniques Entre Orient et Occident dans l'indiennage au XVIIe Siècle*, - Le Goot de l'Inde, ed. Gérard Le Bouuddec et Brigitte Nicolas (Rennes: Presses Universitaires de Rennes, 2008), էջ 44-51; *Les Arméniens et le Transferts de Technologies Entre Orient et Occident: l'exemple de l'indiennage au XVIIe Siècle*, - Loin de l'Ararat... Les petites Arménies d'Europe et de Méditerranée et les Arméniens de Marseille, ed. Morel Deledalle, Mouradian, Pozzoni-Itier (Paris: Hazan-Réunion des Musées de Marseille-MUCEM, 2007), էջ 92-93:

21 Իրանական մսխալ- 4724 գր. (տե՛ս *Յովհաննէս Տեր-Դաւթեան Զուղայեցու Հաշուետումարը*, աշխատասիրութեամբ Լ. Ս. Խաչիկեանի եւ Յ. Ռ. Փափազեանի, Երևան, 1984, էջ 53):

22 Քաշի միաւոր, որ համապատասխանում էր «ման» պարսկական չափման միաւորին, որը հասասար էր մօտ 3000 գրամի (նոյն տեղում, էջ 391):

23 Հասասար է 637,74 գրամի (նոյն տեղում էջ 408):

24 Աւելի մանրամասն տե՛ս Victor Langlois, *Numismatique de l'Arménie au Moyen Age*, Paris, 1885, էջ 9-10:

25 Հարցի լիակատար մատենագիտութիւնը տե՛ս Kéram Kévonian "Numération, Calcul, Comptabilité et Commerce," *Les Arméniens dans le Commerce Asiatique au Début de l'ère Moderne*, ed. Sushil Chaudhury and Kéram Kévonian, Paris: Éditions de la Maison des Sciences de l'homme, 2007, էջ 283-367.

26 *Յովհաննէս Տեր-Դաւթեան Զուղայեցու Հաշուետումարը*, էջ 62:

27 Տե՛ս Kéram Kévonian, նոյն տեղում, էջ 310-315:

նից, հինդից, ուրդուից, սինհալերէնից, թամիլերէնից եւ այլն՝ կախուած ապրանքատեսակի գնման վայրից:

Հաշուեմատեանի տպագրութիւնը տարիներէ հետագոտական աշխատանքի արդիւնք է: Հաշուի առնելով տեքստի խրթինութիւնը, ինչպէս նաեւ մեծ քանակութեամբ օտարալեզու բառերի առկայութիւնը, բնագրին կից ներկայացնում ենք նաեւ մեր կազմած բառարանը, որով փորձել ենք հեշտացնել տեքստի ընկալումը: Մի շարք բառերի (հիմնականում՝ ածականներ) նշանակութիւնը, ցաւօք, անհնար եղաւ պարզել: Ներկայացնում ենք այդ բառերն ըստ այբբենական կարգի՝ դրանց բացատրման գործը ապագային թողնելով. անդամում, բաշ, գրէչայ, դամնի, թրաշիբաբ, լուլում, կարկտակ, ձակ, դաշղար, դուբայ, նիլում, շիրբում, շօթում, դուռնկ, ունկրի, չանամ, չօքի, սարհամ, վէստ, տին սէրի, փեքում, քաշբաթ, քարփուկ:

Բառարանի կազմումը հնարաւոր էջը լինի առանց ԱՄՆ-ի Չիկագոյի համալսարանի հարաւարեւելաասիական ամենալայտնի եւ ընդարձակ թուանշային առցանց բառարաններէ²⁸: Այս էլ-գործիքի օգնութեամբ հնարաւոր էր կատարել լատինատառ եւ արաբատառ որոնումներ:

Հաշուեմատեանը տպագրութեան պատրաստելիս ընտրել ենք ձայնաւորների սղումները, համառօտագրութիւնները ու յապաւումները բացելու տարբերակը: Սղուած տառերը նշագրելու համար օգտագործել ենք [] փակագծերը: Որպէսզի տեքստն անտեղի չծանրանայ, որոշ շատ յաճախ կրկնուող բառերի դէպքում խուսափել ենք փակագծեր աւելացնելուց: Ահա այդ բառերի ամբողջական ցանկը՝ ալմ[ա]զ, ամ[ենայն], այիբզ[ա]ր, արծ[ա]թ, բ[ա]բ[ա]թ, բ[ա]ր[ա]կ, բ[ու]ս-

ր[ա]դ, բի[ա]յիբ, գերմ[ա]կ, գուշվ[ա]ր- [ա]յ, գր[ա]ծ, դ[ե]կ[ա]ն, դ[ա]ն[ա]յ, ե[ա]- դ[ու]թ, ըռ[ա]նկ /ռ[ա]նկ, Ըսպ[ա]հ[ա]ն, թ[ա]րթ[ա]րի, թ[ա]խտ[ա]յ, թապր[ա]յ, լաջվ[ա]րթ/լաջվ[ա]րդ, կ[ա]պ[ու]տ, կ[ա]ր- մ[ի]ր, հ[ա]մ[ա]րն, հ[ա]շթ, հ[ա]շտ[ա]նկ, դ[ա]լ[ա]մբ[ա]ր, դ[ա]լթ[ա]ն, դիրէթ, ճ- [ա]րմ[ա]կ, մ[ա]րգ[ա]րիտ, մ[ա]տ[ա]նի, մէդ[ա]նով, մուս[ա]լ[ա]ս, մսխ[ա]լ, յ[ի]ս- տ[ա]կ, ն[ու]մր[ա]յ, շ[ա]ր[ա]ծ, շ[ա]ք- [ա]րի, պ[ա]կ[ա]ս, ջ[ի]նս, ջ[ա]մն/ջ[ա]մ- ն[ա]յ, ս[ա]րմ[ա]յ, վ[ա]զն/վ[ա]զնն, վ- [ե]ր[ա]յ, տ[ա]փ[ա]կ, տ[ա]շ[ա]ծ, փ[ո]քր, փ[ու]նթ, ք[ա]շն, ք[ա]մռ[ա]նկ, Ֆիր[ու]- զայ, Ֆռ[ա]նկփ[ա]ս[ա]ն:

Խոջա Մինասի եւ Ադա Մաթոսի միջեւ առեւտրական գործընթացների մասին հաշուեմատեանն իր տեսակի մէջ եզակի է: Համենայն դէպս, մեզ յայտնի չեն նմանատիպ տեքստեր, որոնք լոյս են սփռում վաղ արդի շրջանի համաշխարհային թանկարժէք քարերի առեւտրի եւ շրջանառութեան վրայ այսքան մանրամասն եւ գործնական տեսանկիւնից:

Հաշուեմատեանն աննախադեպ հնարաւորութիւն է ստեղծում հետեւելու մէկ առեւտրական ընտանիքի՝ Արեւելքից Արեւմուտք տեղափոխուող թանկարժէք քարերի 25 խմբաքանակների շարժին եւ բովանդակութեանը՝ այդպիսով հնարաւորութիւն ընձեռելով աւելի մանրամասն ուսումնասիրութեան դէպքում հաշուարկել հսկայական կապիտալի տեղափոխութիւնը տասներեք տարիների ընթացքում:

Յուսով ենք, որ այս աշխատանքը, իսկ շուտով նաեւ դրա անգլերէն թարգմանութիւնն ու էլ աւելի խորը ուսումնասիրութիւնը իր օգտակարութիւնը կ'ունենայ աղամանդի եւ թանկարժէք քարերի միջազգային առեւտրի ուսումնասիրութեամբ զբաղուող մասնագէտների համար:

28 St'u <https://dsalrv04.uchicago.edu/dictionaries/> (վերջին մուտքը՝ 30.05.2019):

[ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ]

Տէր Աստուած իմ, Յիսուս Քրիստոս, դու հոգաս զպէտս մէր եւ օգնութիւն մեզ ի քէն եկեսցէ եւս դու ուղղես զմէզ: Փոքր թիվն ԿԴ [64] նադար ամսոյ Ա[Ն] թարվզցի Մաթոսի որդի Ադէն ինձ՝ Մինասիս ընկերացաւ, ընկերայգիր արեւո՝ թասվիլով ապր[ա]նք տարաւ, որ Ֆռանկստան ծ[ա]խէ: Իւր սարմայէն վեր առու, այս է, որ ներքոյ գրեցաւ²⁹:

Նումրայ ա	0010 դանայ	նիլբում ոանկին ֆիրուզայ	վազն	լզ դիրէթ
Նումրայ բ	0050 դանայ	էլ բաբաթ նիլբում ֆիրուզայ	վազնն	ձգ դիրէթ
Նումրայ գ	0110 դանայ	էլ սինայ ըռանկ ոնկին ֆիրուզայ	վազնն	բճժէ դիրէթ
Նումրայ դ	0540 դանայ	նիլբում նօխուտի ֆիրուզայ	վազն	
Նումրայ ե	0800 դանայ	Սինայ ոանկ նօխուտի ֆիրուզայ	վազն	
Նումրայ զ	0004 դանայ	նիլբում եքայ դանայ ֆիրուզայ	վազն	խդ դիրէթ
Նումրայ է	0080 դանայ	նիլբում մատանիշինձ ֆիրուզայ	վազնն	
Նումրայ ը	0045 դանայ	նիլբում դորոշտ հաբաբի ֆիրուզայ	վազն	
Նումրայ թ	3465 դանայ	ոանկին յիստակ ջրով գուշվարայ նիլում	վազն	ոգճկ մսխալ
Նումրայ ժ	0001 գրէ	լէվ ջրով կարմիր եաղութի խաքայ	վազնայ	ՕՕձը մսխալ
Նումրայ ժա	0001 գրէ	քաշ կարմիր եաղութի խաքայ	վազնն	բճլօ մսխալ
Նումրայ ժբ	0002 դանայ	մեծ բաբայդօտի - - -		
Նումրայ ժգ	0001 քիսայ	օրթայ բաբաթ մարգարթի խաքայ	վազնայ	բճլգ մսխալ
Նումրայ ժդ	1900 դանայ	տաշած նգիմի լէվ բուսրաղ	վազնն	անձօ մսխալ
Նումրայ ժե	0001 գրէ	անտաշ քուլուդի բուսրաղ	վազնն	անձօ մսխալ
Նումրայ ժզ	0001 գրէ	էլ անտաշ բուսրաղ - -	վազնն	անխը մսխալ
Նումրայ ժէ	0073 դիտր	Թավրիզի քարն ոանկին լաջվարթ	վազնն	նգ դիտր Թավրիզի քարն
Նումրայ ժը	0001 գրէչայ	կտրած տաշած ջինս լաջվարթ	վազնն	ան. մսխալ
Նումրայ ժթ	0010 ջորոյ խակ	լէվ թազայ ըռէվանդ	վազն	բճ.է դիտր Թ[ա]վրի գի քարն
Նումրայ ի	0001 խակ	էլ Աղայջանին սարմայիցն ոէվանդ	վազն	ժբ դիտր Թավրիզի դ դիտրն գերմակայ
Նումրայ իա	0001 մեծ կապոց	թավսիլումն Ե դիտր ≡ խաքայ	վազնն	ե դիտր է սէր Մաշադի
Նումրայ իբ	0001 գրէ	նիլբում տաշած Աղայջանին ֆիրուզայ համարն		ոգճիօ դանայ
Նումրայ իգ	0001 գրէ	տաշած նգիմի բուսրաղ- համարն		բճիէ դանայ
Նումրայ իդ	0001 կապոց	անտաշ յիստակ բուսրաղ համարն		դոթճիօ դանայ

29 Բնագրում այստեղ այլ ձեռագրով ու կնքադրոշմներով յետագայում անելացուած է. «Թիվն Յիսուսի 1679 սէթէ- մբրէ: [Երկու կնքադրոշմներ] էս Բ[2] միրն անքոյ գրեալ երկու վկայոց միրն այ, որ ոչ ով կարան[այ]՝ ոչ թուխտն փոխել. էս Աղայ Մինասիս դ-ֆտարիցն սավադ ան արարէլ, որպէս ես Զաքարայ դի Պետրոս Օէրիման էսօր տեսի, ազօստոյ ԺԳ[13] թ[ի]վն 1785»-

--- 13 նայմն օրն թէ յինքն յինք առէց թէ Տէր Գալուցին յերես արար ջամն ելաւ: 025000 դեկան:

Բաբաթէլ Թարվիդիոյ բարաթ արար, որ ես Մինասըս Ըսպահան տվի -- ջամն 040000 դեկան:

Բ

Փոքր թվ[ի]ն ԿԶ [66] Շբ[ա]թ ամսոյ ԻԶ [26] բ[ա]թէլ Մաթոսի որդի Աղէ վերայ աղարկեցի Աղայմալն տարաւ. այս է ներքոյ գրեցաւ.

[2 կնքադրոշմներ]

Նումրայ ա	ա դանայ	մուսալ[ա]ս ճարմակ տափակ թաբով արմազ	վազն	ժբ ցորէն
Նումրայ բ	ա դանայ	գլուխն սարթիզ բիայիբ թաբով արմազ	վազն	ժգ ցորէն
Նումրայ գ	ա դանայ	տակն թախտայ գլուխն թարթարի բիայիբ արմազ	վազն	ժգ ցորէն
Նումրայ դ	ա դանայ	ձիք թավրայ բիայիբ թաբով արմազ	վազն	ժբ ցորէն
Նումրայ ե	ա դանայ	տիր բարակ բիայիբ շարգուշայ թաբով արմազ	վազն	օէ ցորէն
Նումրայ զ	բ դանայ	թարթարի յիստակ թաբով գուշվարայ արմազ	վազն	իէ ցորէն
Նումրայ է	ա դանայ	բադամի թարթարի ոանկ փոքր շաքարի արմազ	վազն	ժօ ցորէն
Նումրայ ը	ա դանայ	թավրայ շարգուշայ բիայիբ թաբով արմազ	վազն	նք ցորէն
Նումրայ թ	գ դանայ	տիր բարակ բիայիբ բադամի թաբով արմազ	վազն	ժէ ցորէն
Նումրայ ժօ	ա դանայ	մատանի տիր բարակ մէդանով թաբով արմազ	վազն	գ ցորէն
Նումրայ ժա	ա դանայ	բարակ մէդանով քնարն ծուռ բադամի արմազ	վազն	է ցորէն
Նումրայ ժբ	ա դանայ	այիբդար շարգուշայ ըուանկն փոքր շաքարի արմազ	վազն	ը ցորէն
Նումրայ ժգ	ա դանայ	քշտէրքն խամ, յստակ ճարմակ թավրայ արմազ	վազն	ը ցորէն
Նումրայ ժդ	ա դանայ	պզտիկ ճարմակ թարթար գուշվարայ յստակ արմազ	վազն	գ ցորէն
Նումրայ ժե	բ դանայ	ծուռ հաշտանկ. ա դեղին ա ճարմակ արմազ	վազն	ժբ ցորէն
Նումրայ ժզ	ժ դանայ	թաբով. գուլ բաթամի բ.քն դեղնաշատ արմազ	վազն	լգ ցորէն
Նումրայ ժէ	դ դանայ	տիր բարակ յստակ բ.քն ճարմակ. բ.քն շաքարի արմազ	վազն	դ= ցորէն
Նումրայ ժը	ա դանայ	լէվ թախտայ մէրհաբ բիայիբ թաբով արմազ	վազն	ժօ ցորէն
Նումրայ ժթ	դ դանայ	փաք նափաք ոանկին մուսալաս բադամի արմազ	վազն	լէ ցորէն
Նումրայ իօ	ա դանայ	շարգուշայ բիայիբ յիստակ թաբով արմազ	վազն	գ ցորէն
Նումրայ իա	նիգ դանայ	գրէ շայ ամէն անդումէ ճարմակ յիստակ արմազ	վազն	նք զիրէթ
Նումրայ իբ	նիդ դանայ	տիր բարակ ամէն անդումէ ճարմակ յիստակ արմազ	վազն	ժթ զիրէթ
Նումրայ իգ	նժօ դանայ	ճարմակ անփախ ոանկին - - - արմազ	վազն	իը զիրէթ
Նումրայ իդ	նժօօ դանայ	թախտայ եւ հաշտանկ քիչրի ճարմակ արմազ	վազն	ժօ զիրէթ
Նումրայ իե	ննօ դանայ	գերմակ ոանկին ղալթի --- արմազ	վազն	իսգ զիրէթ
Նումրայ իզ	իդ դանայ	չրքին այիբդար - - - արմազ	վազն	լզ զիրէթ
Նումրայ իէ	իը դանայ	փաք նափաք ճարմակ դեղին խառն արմազ	վազն	ժա = զիրէթ
Նումրայ իը	ժօ դանայ	անփախ ճարմակ թախտայ արմազ	վազն	է զիրէթ

Բ[ա]թէլ փոքր թվ[ի]ն ԿԶ [66] Շբ[ա]թ ամսոյ ԻԶ [26] Մաթոսի որդի Աղէ վերայ աղարկեցի. էլ Աղայմալն տարաւ. այս է ներքոյ գրեցաւ.

Նումրայ ա	դ դանայ	ոանկին Գ լէվ Ա շոր կարմիր եաղութ	վազն	օք զիրէթ
Նումրայ բ	նժգ դանայ	ոանկին բիայիբ մէդանով կարմիր եաղութ	վազն	դք զիրէթ
Նումրայ գ	նզնիօ դանայ	ոանկին բիայիբ մէդանով կարմիր եաղութ	վազն	նիսք զիրէթ
Նումրայ դ	էնժօ դանայ	ոանկին բիայիբ յիստակ կարմիր եաղութ	վազն	նք զիրէթ
Նումրայ ե	բոժօ դանայ	սինայ ոանկ ջրով յիստակ կարմիր եաղութ	վազն	էնժք զիրէթ
Նումրայ զ	դոգն դանայ	էլ քամոանկ յիստակ ջրով կարմիր եաղութ	վազն	գնիսք զիրէթ
Նումրայ է	անիգ դանայ	խառն ոանկին քամոանկ կարմիր եաղութ	վազն	ժգ զիրէթ
Նումրայ ը	դ դանայ	ոանկին քամոանկ այիբդար կարմիր եաղութ	վազն	ժը զիրէթ
Նումրայ թ	ժգ դանայ	մուք ոանկին եւ օրթայ գուշվարայ թէ նգիմի կապուտ եաղութ	վազն	բնժք զիրէթ
Նումրայ ժ	գ դանայ	ոանկին նգիմի կապուտ եաղութ---	վազն	ժդ զիրէթ
Նումրայ ժա	դ դանայ	փաք նայփաք մեծ պզտիկ ճարմակ եաղութ	վազն	ժթ զիրէթ
Նումրայ ժբ	բ	թասպէ ջրով ղալթան շիրին ճարմակ մարգարիտ	վազն	ն.բ զիրէթ
Նումրայ ժգ	իէ դանայ	ջրով շիրին ղալթան ճարմակ մարգարիտ	վազն	ժէ զիրէթ
Նումրայ ժդ	իգ դանայ	խառն լէվ վատ ճարմակ մարգարիտ	վազն	ժդ մսխալ
Նումրայ ժե	բ դանայ	լէվ ջրով ղալթան գուշվարայ ճարմակ մարգարիտ	վազն	ե զիրէթ
Նումրայ ժզ	ժը դանայ	լէվ փուշտ փաք ճարմակ նիմուռ	վազն	իա զիրէթ
Նումրայ ժէ	լդ դանայ	ոանկին տաշած լաշվարդ լաշվարդ	վազն	ժթ մսխալ
Նումրայ ժը	նզնիսօ դանայ	նիլբում յիստակ նշ[ա]յբուրի դանէն ժ ցորէն ֆիրուզայ	վազն	նժօ մսխալ
Նումրայ ժթ	նէ դանայ	եք դանայ նիլբում ոանկին յիստակ դանէն ժԶ ցորէն ֆիրուզայ	վազն	ժգ մսխալ
Նումրայ իօ	գ դանայ	եքա գուզին ջինս նիլբում ֆիրուզայ	վազն	ժ. զիրէթ
Նումրայ իա	բն դանայ	փէքումի որէ սարթիգ նիլբում դրիստ նօխ[ու]դի ֆիրուզայ		
Նումրայ իբ	նիգ	թասպէ մեծ մեծ գլուխ. աւալ ճարմակ աղեղ		
Նումրայ իգ	ննդ	թասպէ սինայ դուում ճարմակ աղեղ		
Նումրայ իդ	նիա	թասպէ փոքր սէում ճարմակ աղեղ		
Նումրայ իե	նե	թասպէ շարում. ոտն --- ճարմակ աղեղ		
Նումրայ իզ	դ զիրտ	շահի ըուանկին մեծ մեծ ճոթ լէվ լաշվարդ		
Նումրայ իէ	բ զիրտ	շահի քամոանկ մեծ ճոթ լաշվարդ		
Նումրայ իը	էնժը դանայ	աւալ Բ յերեսի արուսաք		
Նումրայ իթ	նզնեօ դանայ	դուում Բ երեսի արուսաք		
Նումրայ լօ	էնդէ դանայ	սէում Բ երեսի արուսաք		
Նումրայ լա	նենգօ դանայ	չարում տափակ Բ երեսի արուսաք		
Նումրայ լբ	գնդ	մսխալ շատն լէվ փոքրն վատ տաշած նգիմի բուսրաղ		
Նումրայ լգ	կէ մսխալ	անտաշ քուլուդի յիստակ ժեծելէ բուսրաղ		

Նումրայ լր	բնիզ մսխալ	լէվ վատ բանի էլ ծեծել էլ խառն բուսրաղ		
Նումրայ լե	ծք	թասպէ ունկին գերմակ յիստակ որ բնկը մսխալայ	ոսվաղ	
Նումրայ լզ	դնձէ մսխալ	ուանկին դրօշտ որ է զմրութի	խաբայ	
Նումրայ լէ	բնկէ մսխալ	ուանկին գերմակ զմրութի	խաբայ	
Նումրայ լը	բու. դանայ	օրթայ բօ թէ գերմակ յիստակ չին ճարմակ նգիմ բլօր		
Նումրայ լթ	զննդ դանայ	չինս ունկին բիայիբ ֆուանկ փասան կարմիր եաղութ	վազն	բնդ ղիրէթ
Նումրայ խ	զն դանայ	լէվ յիստակ սինայ ըուանկ -- կարմիր եաղութ	վազն	անձը ղիրէթ
Նումրայ խա	զնիզ	թասպէ ունկին յիստակ լէվ կարմիր աղիղ		
Նումրայ խբ		չովաք աղիղ էր մնաց Թարվէզ		
Նումրայ խգ	անօզ ղիտր	շահին քարն լէվ էլ օրթայ էլ մեծ գերմակ	լաջվարդ	
Նումրայ խդ	կ ղիտր	շահին քարն ---	ռէվանդ	
Նումրայ խե		Գ[ա]նգ Սաղ[ա]ր էր մնաց Թարվէզ		
Նումրայ խզ		դամնի էր մնաց Թարվէզ		
Նումրայ խէ		մանած էր մնաց Թարվէզ		
Նումրայ խը	խք	մուշկ	349 օնցայ	
Նումրայ խը	զնդզ նաֆայ	անկաշի ղալանդարի մուշկ	վազնն	բուճնձ մսխալ
Նումրայ խթ	բնկէ նաֆայ	կաշօվ նաֆարիդար մուշկ	վազնն	անխօ մսխալ
Նումրայ ծ	բնի դանայ	սինայ ունկ ջրով կարմիր եաղութ	վազնն	ղէ ղիրէթ
Նումրայ ծա	զ դանայ	քար Բ.քն եաշմ մինն բաբաղուռի եաշմ	վազն	ռնդօ մսխալ
Նումրայ ծբ	ա գրէ	չանամ դալ, Ա. թասպի սլէմանի շանամդալ	վազն	
Նումրայ ծգ	նք ղիտր	Շ[ա]հի շարբաֆի ապրիշում. Հալաբ ապրիշում	վազն	անք շահի ղիտր

Բաբ[ա]թ էլ փոքր թվին ԿՁ[66] Շբ[ա]թ ամսոյ ԻՁ[26] էլ Աղէ վերայ աղարկեցինք իմ Մինասիս եւ Պետրոսին սարմայիցն էլ Աղամալն տարաւ այս է գրեցաւ.

Նումրայ ա	580 դանայ	լէվ մադան - - հաշտանկ արմազ	վազն	061 ղիրէթ
Նումրայ բ	067 դանայ	լէվ մադան-- հաշտանկ արմազ	վազն	020 ղիրէթ
Նումրայ գ	048 դանայ	բաթ էլ հաշտանկ արմազ	վազն	0036 ղիրէթ
Նումրայ դ	036 դանայ	էլ բաբաթ հաշտանկ արմազ	վազն	054 ղիրէթ
Նումրայ ե	005 դանայ	էլ բաբաթ հաշտանկ արմազ	վազն	010 = ղիրէթ
Նումրայ զ	001 դանայ	էլ բաբաթ հաշտանկ արմազ	վազն	004 ղիրէթ
Նումրայ է	003 դանայ	էլ բաբաթ հաշտանկ արմազ	վազնն	002 ղիրէթ
Նումրայ ը	137 դանայ	քիչրի անփախ թախտայ ճարմակ արմազ	վազնն	016 ղիրէթ
Նումրայ թ	042 դանայ	փախ տված թախտայ լէվ ճարմակ արմազ	վազնն	021 = ղիրէթ
Նումրայ ժ	032 դանայ	փախ տված թախտայ լէվ ճարմակ արմազ	վազն	017 ղիրէթ
